

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՆԱԴԱՅՈՒԹՅՈՒՆ

Լ. Դ. Բ. Աղայան — Գրաքարի քերականություն

Հատ. 1, գիրք Ա, ԳԱ հրատարակչություն, 1964 թ., 362 էջ:

Ժամանակակից լեզվաբանությունը վերջին երկու տասնամյակներում խոշոր քայլեր է արել: Վեզվի հնչյունական համակարգի ուսումնասիրության բնագավառում, Բացի նրանից, որ հետազոտական ոլորտի մեջ ներառվեցին բազմաթիվ լեզուների հնչյունական երևույթներ, հատկապես նրա հնչյունական համակարգի քննության նոր եղանակներ, Հրապարակ եկան ալիպսի աշխատություններ, որոնք, իսկն ասած, հեղաշրջում առաջ բերին հնչյունաբանական պատկերացումների մեջ: Առանձնապես նոր հայեցակետի մշակման, հիմնավորման մեջ կարևոր դեր ունեցան Շլեր-բայի, Տրուբեցկոյի, Յակոբսոնի, Մարտինեի ուսումնասիրությունները:

Մեզ մոտ ևս որոշակի աշխատանք է տարվել հայերենի հնչյունական երևույթների առանձին հարցերի քննության ուղղությամբ: Սակայն գեոևս մենք լուսենք հայ գրական լեզուներից որևէ մեկի հնչյունական համակարգի ամբողջական, բազմակողմանի և գիտության ժամանակակից պահանջները բավարարող մենագրական ուսումնասիրություն: Այս տեսակետից մեծ արժեք է ստանում պրոֆ. էգ. Աղայանի վերջերս լույս տեսած ուղագրավ ուսումնասիրությունը¹, նվիրված հին գրական հայերենի՝ գրաքարի դասական շրջանի հնչյունական համակարգին:

Հեղինակի նպատակադրումը, ինչպես այդ երևում է նախաբանից, ավելի մեծ է: Նա առանձին գրքերով պետք է ներկայացնի նաև գրաքարի ձևաբանությունը, շարահյուսությունը, բառագիտությունը՝ սինխրոնիկ (դասական գրաքարի փուլը) և դիսխրոնիկ (պատմական) տեսանկյուններով: Ամբողջ ուսումնասիրությունը կամփոփվի երկու հատորի մեջ, յուրաքանչյուրը շորսական գրքով՝ գրաքարի կառուցվածքային տարրեր բնագավառների համեմատ: Գրախոսվող աշխատությունը «Գրաքարի քերականություն» գրքաշարի առաջին հատորի առաջին գիրքն է, հնչյունաբանությունը: Սա (ինչպիսին և կլինի ամբողջ առաջին հատորը) սինխրոնիկ, համաժամանակյա ուսումնասիրություն է, կառուցված դասական գրաքարի նյութերի հիման վրա: Երկրորդ հատորը կլինի դիսխրոնիկ ուսումնասիրություն, կընդգրկի գրաքարի պատմական շրջանը:

Հեղինակը աշխատության ներածական բաժնի սկզբում (ախաբանք) համառոտակի անդրադառնում է գրաքարի, իրեն գրական լեզվի, բնույթի, նրա զարգացման տարրեր շրջանների, գրաքարի մահացման պատմական գործոնների հարցերին: Այնուհետև պարզաբանում է գրաքարի քերականությունը ուսումնասիրության կառուցվածքը, նպատակները: Ներածական բաժնի շարունակության մեջ (գրաքարի հնչյունական համակարգի ուսումնասիրությունը հին շրջանում), նշելով ուսումնասիրության պատմության այլոց կողմից արված շրջանաբաժանումները, հեղինակը ընդունելի է համարում հետևյալ շրջանաբաժանումը. ա) Փեմականական մեկնաբանական աշխատությունների շրջան (5—17-րդ դդ.)՝ իր երկու ենթաշրջաններով. այն է՝ 1) հունատիպ քերականական մեկնաբանությունների ենթաշրջան (5—13-րդ դդ.) և 2) ինքնուրույն քերականությունների սաղմնավորման և զարգացման արվեստի ստեղծման ենթաշրջան (13—16-րդ դդ.), բ) Ինֆլուույն ֆեմականական աշխատությունների շրջան (17-րդ դարից մինչև մեր օրերը), նույնպես իր երկու ենթաշրջաններով. 1) լատինատիպ քերականությունների ենթաշրջան (17—18-րդ դդ.) և 2) ինքնատիպ քերականությունների ենթաշրջան: Այս շրջանների ու ենթաշրջանների համառոտ բնութագրումից հետո՝ հեղինակը հիշատակում է գրաքարի հնչյունական համակարգի գիտական ուսումնասիրության հիմնադիրներին ու արդիականավոր ներկայացուցիչներին: Արժանի տեղ է հատկացվում Հյուրմանին, Մեյբին, Պեդեր-

¹ է գ. Բ. Աղայան, Գրաքարի քերականություն, հատ. 1, Սինխրոնիկ, գիրք ա. Հնչյունաբանություն, Երևան, 1964:

սենին, Աճառյանին, Բենվենիստին և ուրիշների, ընդ որում նաև սովետահայ այն լեզվաբան-ներին, որոնք այս կամ այն շահով խորացել են գրաբարի հնչյունական համակարգի ուսումնասիրության հարցերում:

Գրաբարի հնչյունական երևույթների մեզ ավանդված ուսումնասիրությունների հիմքը դրվում է Դ. Թրակացու «Քերականության արվեստի» թարգմանությամբ: Սակայն, ինչպես ընդգծում է պրոֆ. Աղայանը, հայերը քերականական արվեստին ծանոթ են եղել թարգմանությունից առաջ էլ և լավատեղյակ էին մայրենի լեզվի հնչյունական համակարգի օրինաչափություններին: Այդ երևում է, օրինակ, դասական շրջանի մատենագրության մեջ եղած քերականագիտական տեղեկություններից և այն բանից, որ մեսրոպյան զարմանալիորեն ճիշտ հնչյունաբանված այբուբենը անհնարին կլիներ, առանց հայերենի հնչյունաբանության որոշակի մշակման:

Այս հարցերի կապակցությամբ պրոֆ. Աղայանը հանգամանորեն գնահատում է «Արվեստի» թարգմանության մեջ և հայ վաղ շրջանի քերականների մեկնություններում եղած հնչյունաբանական վերլուծությունները: Համեմատություններ կատարելով հունական քերականության ըսկրզությունների հետ, պարզաբանում է այդ շրջանին վերաբերող հնչյունաբանական մի շարք աղոտ հարցեր:

Գրքի բուն հետազոտական մասը, այսինքն՝ «Հնչյունաբանություն» հատվածը բաղկացած է հինգ գլխից: «Ընդհանուր հիմունքներում» (առաջին գլուխ) հնչյունաբանությունը իբրև լեզվաբանության առանձին բաժին բնութագրելուց հետո՝ հեղինակը կանգ է առնում հնչյունի քննության տարբեր ասպեկտների վրա: Հնչյունների ձայնային և արտասանական (արտաբերական) տեսանկյունով հետազոտությունը նա կոչում է ոնոլոնխոսություն:

Հայտնի է, որ հնչյունների ձայնային հատկությունների ուսումնասիրությունը կազմում է ձայնային (ակուստիկական) հնչյունաբանության առարկան, իսկ արտասանական (ֆիլոլոգիական) հատկանիշների ուսումնասիրությունը՝ արտասանական (արտիկուլյատոր) հնչյունաբանության առարկան: Բացի այդ՝ հնչյունների քննություն կարելի է տանել նաև պատմական տեսանկյունով, որ է պատմական հնչյունաբանությունը: Վերջապես հնչյունները կարելի է ուսումնասիրել դրանք դիտելով իբրև իմաստներ տարբերակող միավորներ: Այս տեսանկյունով հնչյունները քննվում են հնչույթաբանության (ֆոնոլոգիայի) մեջ:

Հեղինակը ճիշտ է նկատում, որ հնչյունական համակարգի ուսումնասիրության տարբեր մոտեցումները տարրեր արդյունավետություն ունեն, երբ դրանք կիրառում ենք լեզվի այս կամ այն էտապի վերաբերյալ: Այսպես՝ ձայնային և արտասանական հատկությունների հետազոտությունը որոշակի արդյունքի է հասցնում, երբ գործ ենք ունենում կենդանի լեզուների հետ, մասնավորապես՝ հնարավորություն է ստեղծվում կիրառելու փորձառական (էքսպերիմենտալ) մեթոդը: Ինչ մնում է հին, մեռած գրական լեզուներին, ապա դրանց հնչյունական համակարգի պատմական ուսումնասիրությունը շատ բան է տվել լեզվաբանությանը: Այս կարգի լեզուների հնչյունական երևույթների ֆիլոլոգիական, ֆիզիկական հետազոտությունը կառուցված է նրկատելի, հաճախ անհաղթահարելի դժվարությունների հետ: Ահա թե ինչու պրոֆ. Աղայանը սույն աշխատությունը հիմնականում կառուցել է գրաբարի հնչույթաբանական վերլուծությունների հիմքի վրա, թեև հնչյունախոսական բնութագրումներին ևս կարևոր տեղ է հատկացրել և անհրաժեշտության դեպքում կատարել է պատմական էքսկուրսներ:

Մեր հին գրական լեզուն՝ գրաբարը ունեցել է իր զարգացման շրջանները: Նրա կառուցվածքային տարրերը ժամանակի ընթացքում ենթարկվել են զգալի փոփոխությունների: Սինխրոնիկ հայեցակետի կիրառումը ենթադրում է գրաբարի որևէ փուլի, իբրև կայուն վիճակի, նկարագրություն: Եվ ահա պրոֆ. Աղայանը ձեռնարկել է 5-րդ դարի առաջին կեսի՝ դասական գրաբարի (մեսրոպյան հայերեն) քննությունը:

Քանի որ ժամանակակից հնչյունաբանության մեջ, հնչույթի ուսմունքի պրոբլեմատիկ հարցերում հատկապես առանձնանում է հնչույթի սահմանման խնդիրը, ապա հեղինակը «Ընդհանուր հիմունքներ» գլխում խոսում է նաև հնչույթի սահմանման վերաբերյալ եղած կարծիքների, ինչպես և հնչույթային հատկանիշների բացահայտման եղանակների մասին: Պրոֆ. Աղայանը ընդունելի է համարում Տրուբեցկոյի սահմանումը՝ նրա մեջ անելով զգալի ճշգրտումներ: Ամփոփելով իր դիտողությունները այս հարցի մասին՝ նա գրում է. «հնչույթը լեզվի այն նյութական միավորն է, որ իր բոլոր դիսկրետիվներին մեջ ունի միևնույն տարբերակիչ հատկանիշները, կամ այլ կերպ՝ հնչույթը միևնույն տարբերակիչ հատկանիշներն ունեցող հնչյունների ընդհանուր է» (էջ 64):

Աշխատության մեջ անհրաժեշտ տեղ է հատկացված նաև հնչույթի տարրերակիչ հատկանիշների քննությանը: Ըստ պրոֆ. Աղայանի՝ հնչույթը իր ֆունկցիավորման մեջ ունի (ևզակի, կոնկրետ) է, հետևապես այն կարող է, էական հատկանիշներից բացի, ունենալ նաև մասնակի հատկանիշներ: Վերջիններս լինում են անհատական (անհատի արտասանական առանձնահատկություններով պայմանավորված), պատահական (հազորդակցման պրոցեսի այս կամ այն գործոնով պայմանավորված) և մշտական: Մշտականները կարող են տարրերակիչ զեր ունենալ կամ չունենալ: Բացի անհատական բնույթի հատկանիշներից, մնացածները կարող են դառնալ տարրերակիչ հատկանիշներ՝ տարրեր աստիճաններ ներկայացնող միավորների համար: Ըստ այդմ էլ հնչիւնակն ընդունում է առաջին, երկրորդ և երրորդ կարգի հատկանիշներ: Առաջինները ճնշույթային տարբերակիչ հատկանիշներ են, երկրորդները հատուկ են հնչույթի բոլոր լզակի գրանորոշմանին միայն որոշակի պայմաններում, տարբերակում են ենթահնչույթները, այսինքն՝ ենթաճնշույթային տարբերակիչ հատկանիշներ են: Երրորդները պատահական են և հանդես են գալիս տարրեր գործոնների ազդեցությամբ, կանոնավոր բնույթ չեն կրում, կազմում են հնչույթային տարատեսակների տարրերակման հիմքը: Սրանք կոչվում են ինչույթային տարատեսակների տարբերակիչ հատկանիշներ:

Հնչույթի տեսության մեջ պրոֆ. Աղայանի ամենակարևոր ներդրումն այն է, որ նա հնչույթը դիտում է իբրև լեզվի մեջ օրյկատիվորեն գոյություն ունեցող նյութական միավոր, որպես իր բոլոր լզակի գրանորոշման ընդհանուրը: Այս մոտեցմամբ հնչույթի ըմբռնումը դրվում է գիտական հիմքի վրա և մի կողմ են մնում այն անորոշությունն ու հակասությունները, որ բնորոշ են ամերիկյան դեակրիպտիվիստներին, մանավանդ կոպենհագենյան գլոսեմատիկների սահմանումներին: Սա միաժամանակ շարունակումն ու ավարտումն է այն առողջ կողմերի, որ կան Տրուբեցկոյի սահմանման մեջ:

Լեզվի հնչույթները կարելի է բացահայտել երկու մեթոդով՝ փորձառական հետազոտություններով և հակադրությունների լզանակով: Առաջինը մեծած լեզուների նկատմամբ կիրառելի չէ, նման դեպքերում կարող է արդյունք տալ լեզվական միավորների հակադրման մեթոդը, որ և արված է գրախոսվող աշխատության մեջ:

Պատահական զրաբարի հնչույթները բացահայտված են պրոֆ. երկրորդ՝ զրաբարի ճնշույթային համակարգը դիտում:

Ինչպես տրադիցիոն հայագիտության մեջ ընդունված է, այնպես էլ պրոֆ. Աղայանը անվիճելի է համարում ա, ե, ը, ի, ո ձայնավոր հնչույթների գոյությունը զրաբարում, որ և հաստատվում է լեզվական միավորների հակադրմամբ: Հայագետներից ոմանք է-ն և ու-ն համարել են երկրաբարային, ոմանք էլ՝ պարզ ձայնավորներ: Քննության առարկա դարձնելով այս հրեյունական տարրերը և որոշելով նրանց ֆունկցիան ու գործածության ոլորտները՝ հեղինակը նոր և հավաստի հետևություններ է անում ու-ի և է-ի վերաբերյալ: Նա համոզվել կերպով ապացուցում է, որ դասական զրաբարում է-ն լզակ է երկրաբարակերպ (դիֆտոնգի) և միայն հետագայում է վերածվել պարզ ձայնավորի: Համոզվել են նաև այն փաստարկումները, որ բերվում են հաստատելու համար ու պարզ ձայնավորի գոյությունը այդ շրջանի հայերենում, շնայած նրա բազադրյալ դրույթանը: Վերհիշյալից երևում է, որ դասական զրաբարում կային վեց ձայնավոր հնչույթներ՝ ա, ե, ը, ի, ո:

Անդրադառնալով պարզ և բազադրյալ վանկարների բնույթին՝ հեղինակը հաջորդականորեն բացահայտում է զրաբարյան երկրաբարաներն ու եռաբարաները, որոշում նրանց դերը իբրև վանկարներ:

Չրաբարյան երկրաբարաները (և եռաբարաները) պրային ձևով արտահայտվում են տառակապակցություններով, բացի է-ից: Բայց նույն տառակապակցությունները բոլոր դեպքերում երկրաբարաներ չեն արտահայտում: Այդ է պատճառը, որ հայագիտության մեջ որոշ տառակապակցություններ (օրինակ, իւ, աւ) տարակարծություններ են առաջ բերել, թե որ դեպքում երկրաբարան են, որ դեպքում ոչ: Բազմաթիվ փաստերի մանրազնին քննությամբ պրոֆ. Աղայանը մերժում է սրոշ տառակապակցությունների երկրաբարային լինելը, հաստատում, հիմնավորում է իրական երկրաբարաների գոյությունը, որոշում նրանց գործածության ոլորտները, զրային արտահայտությունները: Պարզվում է, որ դասական զրաբարի հնչունական համակարգում, վեց ձայնավորից բացի, կային եա, ուա, ուե, ուի, ուո, ալ, աւ, եւ, ոյ, իւ երկրաբարաները, է երկրաբարառակերպը, եաւ, եալ, ուալ, ուաւ, ուոլ եռաբարաները և ուէ եռաբարառակերպը:

Հակադրման եղանակն է ընկած նաև բազաձայն և ձայնորդ հնչույթների բացահայտման հիմքում: Պայթականներին (ու պայթափականներին) անդրադառնալիս, նշելով դրանց մասին լզած կարծիքները, հեղինակը դիտում է, որ հայերենում այդ բազաձայնների լարվածություն—

ոչ լարվածություն հատկանիշը կարևոր դեր է խաղացել: Պայթականները հնադույն շրջանում շատ թույլ են արտասանվել: դասական շրջանում նրանց էական հատկանիշներից մեկը եղել է ոչ լարվածությունը: Ընդ որում ձայնիչների շնչեղացած կամ ոչ շնչեղացած արտասանությունը հնչույթային արժեք չի ունեցել, էական դեր է ունեցել ձայնեղություն-խույթություն հակադրությունը:

Գրաբարն ունեցել է լ, ւ, մ, ն, ր, ու, յ, և ձայնորդները: դրանցից լ, ւ, մ, ն, ր, ու ձայնորդները հանդես են գալիս միայն իբրև բաղաձայն հնչույթներ, իսկ յ և ւ ձայնորդները և՛ իբրև բաղաձայն, և՛ իբրև ձայնավոր: Ղ-ն դեռևս ձայնորդ էր և ետնալեզվային ձայնեղ շփականի հնչումը չուներ: Լ-ն և Ղ-ն դրսևորվում էին հակադրությունների հնչույթային, ենթահնչույթային, չեղոր. ոլորտներում:

Խոսելով հնչույթների տարբերակիչ հատկանիշների մասին, պրոֆ. Աղայանը պարզում է հնչույթային ներավոր լայն հակադրությունների բնույթը, որ բնորոշ է դասական գրաբարին: Ընդամենը ստացվում են տասներկու հակադրություններ, ինչպես՝ ձայնավորություն-բաղաձայնություն, շնչեղություն-ոչ շնչեղություն, թավություն-անոսություն և այլն:

Հեղինակը պարզում է նաև հնչույթների բնույթն ըստ նրանց գործածության ոլորտների: Գրաբարի համար ընդունվում են երեք ոլորտներ՝ ձայնավորական, բաղաձայնական, ձայնորդային: Տարբերակում է մենոլորտ և տարոլորտ հնչույթներ: Օրինակ, ա-ն մենոլորտ է, որովհետև կարող է լինել միայն ձայնավորական ոլորտում, իսկ ու-ն և ր-ն տարոլորտ են, որովհետև դրանց (ու) և (ի) ենթահնչույթները՝ ընդգրկում են ձայնավորական, (ւ) և (ր) ենթահնչույթները՝ ձայնորդային, իսկ (վ) և (յ) ենթահնչույթները՝ բաղաձայնական ոլորտները:

Երկրորդ գլխի վերջում հանգամանորեն պարզաբանված է հնչույթային դիրքերի հարցը:

Նյութի մանրագնին քննությամբ, ուրույն հարցադրումներով, վերլուծությունների թարմությամբ աչքի է ընկնում նաև հնչյունախոսական հարցերին նվիրված մասը (երրորդ գլուխ): Թեև մեծած գրական լեզվի վերաբերյալ ղժվար է հնչյունախոսական շատ հարցերում ստույգ հետևություններ անելը, սակայն աշխատության մեջ բազմաթիվ էքսկուրսներով, օժանդակ տրվել է լայնների հմուտ օգտագործմամբ և վիճակագրական որոշ հաշվումներով նոր խոսք է ասվում այս բնագավառում ևս: Արված մի շարք դիտողությունները կարևոր են ոչ միայն գրաբարի, այլև ընդհանրապես հայոց լեզվի պատմության ու բարբառագիտության մի քանի կնճոտ խնդիրների լուծման տեսակետից: Հեղինակը անհրաժեշտ չափով անդրադարձել է դասական գրաբարի հնչյունաբանական այլ միավորների՝ վանկի, շեշտի, ելևջավորման (ինտոնացիայի) բնութագրմանը:

Աշխատության չորրորդ գլուխը նվիրված է հնչյունափոխության հարցերին: Ընդունելով երկու կարգի հնչյունափոխություններ՝ պատմական և համաժամանակյա, հեղինակը իր նպատակադրումին համապատասխան, քննում է համաժամանակյա հնչյունափոխական երևույթները: Համաժամանակյա հնչյունափոխությունները իրենց հերթին լինում են երկու տեսակ՝ դիրքային և փոխադրական:

Տիպական օրինակների, փաստերի հաջող ընտրությամբ ցուցադրված են սրանց դանազան դրսևորումները դասական շրջանում:

Նշված հարցերի կապակցությամբ պրոֆ. Աղայանը նոր ըմբռնում է մտցնում հնչյունական լծորդությունների գաղափարի մեջ: Հնչյունների՝ որոշակի պայմաններում և կանոնավոր կերպով իրար փոխարինելը անվանում է հնչյունական լծորդություններ, իսկ իրար փոխարինող հնչյունները լծորդ հնչյուններ կամ լծորդակիցներ: Տարբերակում է հերթագայական և ազատ լծորդություններ: Սրանք զանազանվում են նրանով, որ հերթագայական լծորդությունները պարզում են տվյալ հնչույթի ոլորտային ընդգրկումը, իսկ ազատ լծորդությունները որոշում են միայն ազատ տարբերակների ոլորտը:

Հնչյունական լծորդությունների նման ըմբռնումը արժեքավոր ներդրում է հնչյունափոխական երևույթների գնահատման մեջ և հնարավորություն է տալիս խուսափելու որոշ անճշտություններից, թյուրիմացություններից: Հեղինակը նոր ձևով է գնահատում ոչ միայն գրաբարյան շատ հնչյունափոխական իրողություններ, այլև հարևանից ուշագրավ դիտողություն է անում ուսուրբնում այսպես կոչված բառավերջի ձայնիչների խլացման հարցի շուրջը:

Աշխատության վերջին՝ հինգերորդ գլուխը նվիրված է մեծապայան այբուբենի և ուղղագրության հարցերին: Հիմնավոր փաստարկներով, գրության եղած ձևերի, եղանակների վերլուծությամբ ցույց են տրված Մեսրոպի հորինած այբուբենի կատարելությունը, նրա անառարկելի մի շարք առավելությունները ժամանակի հայտնի այբուբենների համեմատությամբ:

Չնայած խիստ հնչույթաբանված լինելուն, մեծապայան գրությունն ունի որոշ առեւծվածային մոմենտներ, որոնք հայագիտական գրականության մեջ տարբեր մեկնաբանություն են

«տացել» Պրոֆ. Աղայանը օրիգինալ լուծում է տալիս այդ առեղծվածային մոմենտներին, համոզիչ հավաստությամբ պարզարանում է այն սկզբունքները, որոնց վրա հիմնված է մեսրոպյան ուղղագրությունը: Գրության տարակարծություն առաջ բերող դեպքերի բնության ժամանակնոր մեկնաբանություն է տրվում, օրինակ, ի, յ, վ, ռ, ե գրերի, ու նրկագրի, նրկարբառների արտահայտող մի շարք տառակապակցությունների գործածությանը:

Աշխատության մեջ առաջ քաշված պորբնների ուսումնասիրությունը կատարված է և՛ տեսական, և՛ փաստական լայն ընդգրկումներով: Հեղվարանական նրբանկատությամբ քաղված փաստերը, լմպիրիկ տվյալները մշակելու, սիստեմավորելու և տեսական լուրջ ընդհանրացումներ անելու կարողությունը հեղինակին հնարավորություն է տվել ներկայացնելու ուրույն կոնցկացիա դասական դրաքարի հնչյունական համակարգի վերաբերյալ:

Աշխատության մեջ հնչյունաբանական փաստերի ծավալուն օգտագործումը, հետազոտական նոր մեթոդների կիրառումը, հսճախ, նոր հարդարումների հետ կապված, տրադիցիոն պատկերացումների հաղթահարումը շին կարող մասնավոր հարցերի շուրջը առարկություններ շահուցել:

1. Ժամանակակից հնչյունաբանական (մանավանդ հնչույթաբանական) հետազոտությունները աչքի են ընկնում հարուստ տերմինաբանությամբ: Դա բնական է: Այդ իր արտահայտությունն է փոխ նաև դրախոսվող ուշխատության մեջ: Հեղինակը գործի է դրել բազմաթիվ նոր տերմիններ: Ընդհանրապես դրքում հնչյունաբանական (հնչույթաբանական) տերմինամշակումը և տերմինների ու տերմինաբանական կապակցությունների գործածումը հաջող են կատարված: Դարելի է առարկել առանձին տերմինների ընտրությանը: Այսպես՝ մեր կարծիքով, օրինակ, Լեթահնչույթ տերմինը այնքան էլ հաջող չէ: Սա հնչույթաբանական գրականության մեջ գործածության մեծ հաճախականություն ունեցող հասկացություն (տերմին) է: Տերմինաբանական տարբերացությունից խուսափելու համար հենց սկզբից պետք է գործածության մեջ դնել այնպիսիներ, որն ընդունելի դառնալու հնոանկարներ ունենա: Allophone տերմինը հայերենում պետք է տար «այլահունչ», թերևս ինչ-որ չափով մեղանչելով իմաստի դեմ, կարելի է գործածել «այլահնչույթ» տերմինը (հնչույթ և այլահնչույթներ): Նույն ձևով էլ, ոչ թե ձևույթ և ենթաձևույթներ, այլ՝ ձևույթ և այլաձևույթներ:

2. Հեղինակը գրում է. «Գրաբարի բոլոր նրկարբառներն աշխարհաբարում դարձել են պարզ ձայնավոր... կամ բաղաձայնի ու ձայնավորի կապակցություն» (էջ 126): Բերված օրինակներն մեջ նշվում է նաև աբիւն>արյուն փոփոխությունը: Մեր կարծիքով արյուն ձևը ուղղակի կապ չունի գրաբարյան աբիւն ձևի հետ (և ոչ էլ՝ լույս ձևը լոյս-ի հետ, կամ կույս-ը կոյս-ի հետ): Իսկ նրկարբառը բարբառներում տալիս է ի կամ ու (ու), այսինքն՝ աբիւն, աբուն (աբուն): Ինչ մնում է աշխարհաբարի արյուն ձևին, ապա սա որոշ իմաստով գրական փոխառություն է հիշեցնում, որովհետև գրական աշխարհաբարը այս ձևը ընդունել ու հաստատել է հենվելով ոչ թե գրաբարյան ձևի հետագա բնական կոլլուցիայի վրա (ի>ի կամ իւ>ու), այլ նրա առջրջանի ընթերցանության ընդունված կանոնի վրա: Համաձայն այդ կանոնի՝ դասական գրաբարի աբիւն ձևը տեքստում կարդացվում է ոչ թե աբիւն, այլ արյուն արտասանությամբ: Վերջինս էլ «գրականացվել» է մեր ազգային-գրական լեզվի ձևավորման շրջանում (գրության մեջ նախ տրադիցիոն իւ ձևով, ապա նոր ուղղագրական սկզբունքի համաձայն՝ յու ձևով): Բսկ թե ինչու դասական հայերենի իւ նրկարբառը ուշ շրջանում կարդացվում է յու արտասանությամբ, այդ այլ հարց է:

3. Ընդհանրապես աշխատության մեջ հնչյունական օրինաչափությունները ցուցադրող, հաստատող օրինակները խնամքով են ընտրված: Վրիպումները հազվադեպ են, ոչ էական: Բերենք մի օրինակ. հայերենի կ, ու, յլ և ռուսերենի к, т, п (կոշտ) ու к, т', п' (փափուկ) բաղաձայնների հարաբերակցությունը ցուցադրելու համար акула, опасный բառերի հետ բերված է նաև водои բառը, որը նշված բաղաձայններից ոչ մեկը չունի:

4. Մեր կարծիքով ձ, ց պայթաչականները ևս պարզ խուլեր կոչել այն պատճառով, որ նրանք շնչեղացած չեն, կարող է թյուրիմացությունների տեղիք տալ:

5. Գիրքը չունի տեղեկատու ցանկեր, ասենք գործածված տերմինների և հնչյունաբանական հասկացությունների արտահայտող տերմինաբանական կապակցությունների ցանկ, օգտագործված գրականության ցանկ և այլն:

Ամփոփենք. պրոֆ. Աղայանի սույն աշխատությունը արժեքավոր ներդրում է հայագիտության զանապարանում: Իկն նոր էջ է բացում հայերենի հնչյունաբանության մեջ: